ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2011թ. ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 82500 /ութսուներկու հազար հինգ հարյուր/ դրամ հատկացնել ,,Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի միջև առևտրատնտեսական և մշակութային համագործակցության մասին,, հուշագրի շրջանակներում ս/թ օգոստոսի 20-ից 25-ը Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջան մարզի պատվիրակության այցի ընթացքում շրջանի հիմնարկ ձեռնարկությունների համար հեռուստացույց գնելու և նվիրելու նպատակով:
2. Մարզպետի խորհրդական Օ. Չիչոյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Մ. Սաֆարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ